ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի ինը ամսում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

<< Զանգեզուր'' Կենսոլորտային Համալիր'' ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Դարգաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ				0.0	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝		118666.9	118666.9	0.0	
1. Դրամաշնորհներ ընդամենը, որից՝		118666.9	118666.9	0.0	
1.1. Արտաքին աջակցության դրամաշնորհներ				0.0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		118666.9	118666.9	0.0	
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				0.0	
3. Այլ եկամուտներ, որից՝		0.0	0.0	0.0	
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0.0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0.0	
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		0.0	0.0	0.0	
- ծառայությունների մատուցումից				0.0	
- ապրանքների մատակարարումից նամ իրացումից				0.0	
- այլ եկամուտներ				0.0	

1	2	3	4	5=3-4	6
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող Ա+տող Բ)	x	118666.9	118666.9	0.0	
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	x	118666.9	124902.9	(6236.0)	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	100160.6	102479.9	(2319.3)	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	x	100160.6	102479.9	(2319.3)	
-Աշխատողների աշխատավարձեր և համեմատական	4111	100160.6	102479.9	(2319.3)	
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112			0.0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	x	850.0	854.0	(4.0)	
Դ2.1. Շարունակական ծախսեր		550.0	554.0	(4.0)	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211			0.0	
-էներգետիկ ծառայություններ	4212	0.0	0.0	0.0	
-Կոմունալ ծառայություններ	4213	0.0	0.0	0.0	
-Կապի ծառայություններ	4214	0.0	0.0	0.0	
-Ապահովագրական ծախսեր	4215	550.0	554.0	(4.0)	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216			0.0	
-Այլ ծախսեր	4217			0.0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	300.0	300.0	0.0	
-Ներքին գործուղումներ	4221	300.0	300.0	0.0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222			0.0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229			0.0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	x	0.0	0.0	0.0	
-Վարչական ծառայություններ	4231			0.0	
-Համակարգչային ծառայություններ	4232	0.0		0.0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233			0.0	
-Տեղեկատվական ծառայություններ	4234			0.0	
-Կառավարչական ծառայություններ	4235			0.0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236			0.0	
-Ներկայացուցչական ծախսեր	4237			0.0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	0.0	0.0	0.0	
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	0.0	0.0	0.0	
-Մասնագիտական ծառայություններ	4241				
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	x	0.0	0.0	0.0	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251			0.0	
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	0.0	0.0	0.0	

1	2	3	4	5=3-4	6
6. Նյութեր	x	0.0	0.0	0.0	
Հումքենյութային նյութեր և հագուստ	4261			0.0	
Գյուղատնտեսական ապրանքներ	4262			0.0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263			0.0	
Տրանսպորտային նյութեր	4264			0.0	
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265			0.0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266			0.0	
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267			0.0	
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269			0.0	
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	x	17656.3	21569.0	(3912.7)	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին	x			0.0	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	x	17656.3	21569.0	(3912.7)	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե այդ թվում		17656.3	21569.0	(3912.7)	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	*17656.3*	*21569.0*	*(3912.7)*	
ԱԱՀ	x	17656.3	21569.0	(3912.7)	
Շահութահարկ	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x			0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	*0.0*	*0.0*	*0.0*	
Նշել ըստ տեսակների		0.0	0.0	0.0	
Նշել ըստ տեսակների				0.0	
Նշել ըստ տեսակների				0.0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ		0.0	0.0	0.0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	*0.0*	*0.0*	*0.0*	
Գույքահարկ	x		0.0	0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	*0.0*	*0.0*	*0.0*	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	x	0.0	0.0	0.0	
Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831			0.0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	4861	0.0	0.0	0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	

1	2	3	4	5=3-4	6
ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող9 -տող9)		0.0	(6236.0)	6236.0	
Զ. ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)	x	0.0	0.0	0.0	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	x	0.0	0.0	0.0	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0.0	0.0	0.0	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0.0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0.0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0.0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121			0.0	
-Կարգական սարքավորումներ	5122			0.0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0.0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0.0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0.0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0.0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0.0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	x	0.0	0.0	0.0	
-Հող	5411			0.0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0.0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0.0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0.0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	x			0.0	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	x	0.0	(6236.0)	6236.0	

Տնօրեն _____ Արման Մկրտչյան
(անուն, ազգանուն)

Գլխավոր հաշվապահ _____ Սառա Մարգարյան
(անուն, ազգանուն)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ԶԱՆԳԵԶՈՒՐ» ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-Ի 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 19-ի թիվ 1465-Ն և 2016թ. սեպտեմբերի 8-ի թիվ 929-Ն որոշումների համաձայն իրականացրել է պահպանության աշխատանքներ 79038,8հա բնության հատուկ պահպանվող տարածքներում՝ որից

- «Շիկահող» մասնաճյուղ «Շիկահող» պետական արգելոց» տեղամաս– 12137.075հա
  «Սոսու պուրակ» պետական արգելավայր» տեղամաս– 64.2հա
  «Խուստուփ» պետական արգելավայր» տեղամաս- 6946.74հա
- «Զանգեզուր» մասնաճյուղ «Զանգեզուր» պետական արգելավայր» տեղամաս- 25711,5959հա
  «Սև Լիճ» պետական արգելավայր» տեղամաս– 240հա
- «Արևիք» մասնաճյուղ «Արևիք» ազգային պարկ» տեղամաս- 31211,19հա
- «Բողաքար» պետական արգելավայր» տեղամաս- 2728հա

1. Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնության ժառանգության պահպանություն, հակահրդեհային միջոցառումների իրականացում

1.1 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում և պահպանման գոտիներում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում: Մարդու գործունեության հետևանքով արգելոցի, ազգային պարկի և արգելավայրերի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում (79038.8 հա):

- Պահպանության աշխատանքներն իրականացրել են մասնաճյուղերը՝ արագ արձագանքման խմբի հետ համատեղ, ՊՈԱԿ-ի 2021թ. աշխատանքային ծրագրի համաձայն:
- «Շիկահող» պետական արգելոցի սահմանասյունների տեղադրման համար տեղի ունեցավ հանդիպում «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի և «ՖՈՐԱՍ-ՇԻՆ» ՍՊԸ-ի տնօրեն Հայկ Առաքելյանի միջև և որոշվեց հուլիսի 26-ից 31-ը ճշգրտված կետերում տեղադրել 40 հենասյուն, որից 24-ը բետոնե, 16-ը երկաթյա:
- «Շիկահող» մասնաճյուղի տնօրենի, «Շիկահող» մասնաճյուղի «Շիկահող» պետական արգելոցի 6-րդ պահաբաժնի տեսուչի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի անտառագետի մասնակցությամբ 6-րդ պահաբաժնում իրականացվել է անտառգնահատման աշխատանքներ:
- Հուլիսի 21-ին գիշերը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները հերթական շրջայց իրականացնելու ժամանակ՝ Քաջարան խոշորացված համայնքի Քիրս-Քուրուտ կոչվող հատվածում, առավոտյան նկատել են Կապան քաղաքի 2 բնակչի, որոնք ենթադրյալ որսագողեր էին: Ոստիկանության հետ

համատեղ, ժամը 22:30-ի սահմաններում՝ որս կատարելու կասկածանքով կանգնեցվել է ավտոմեքենա, որի բեռնախցիկում 2 տարայի մեջ առկա է եղել Կարմրախայտ տեսակի ձուկ: ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի կողմից նշված անձինք բերման են ենթարկվել բաժին: Դեպքի մասին տեղեկացվել է ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժին:

- Օգոստոսի 8-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Զանգեզուր» մասնաճյուղի «Զանգեզուր» պետական արգելավայր տեղամասի հարակից Գարդ կոչվող տարածքում, մասնաճյուղի տնօրենի և արագ արձագանքման տեսուչի հերթական շրջայցի ժամանակ արձանագրվել է որսագողության դեպք: Ոստիկանության հետ համատեղ, որս կատարելու կասկածանքով կանգնեցվել է ավտոմեքենան, որի զննության ընթացքում հայտնաբերվել է 1 նապաստակ և 9 հատ Կարմրախայտ տեսակի ձուկ: ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի կողմից նախապատրաստվում են նյութեր: Դեպքի մասին տեղեկացվել է ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժին:

1.2 Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում:

- ՊՈԱԿ-ի տնօրենի 10.08.21 N34-Լ հրամանի համաձայն, հրդեհների բռնկումները կանխելու նպատակով, ԲՀՊ առավել հրդեհավտանգ տարածքներում, անհրաժեշտության դեպքում պետք է սահմանել շուրջօրյա հերթապահություն:
- Հուլիսի 17-ին «Զանգեզուր» մասնաճյուղի 2-րդ պահաբաժնի հարակից տարածքում հրդեհ է բռնկվել, որի հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել են մասնաճուղի թվով 7 աշխատակից: Հրդեհը մարվել է մոտ ժամը 22:00-ին:
- Հուլիսի 20-ին ժամը 16:00-ին, Մեղրի Երևան ավտոմայրուղու 34-րդ կմ-ի ձախ հատվածում, «Արևիք» մասնաճյուղի «Արևիք» ազգային պարկ տեղամասի 5-րդ պահաբաժնի հարակից տարածքում հրդեհ էր բռնկվել: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել են՝ թվով 9 աշխատակից և մասնաճյուղի տնօրենը: Հրդեհը մարվել է 18:00-ին: Այրվել է 1500մ^2 խոտածածկ տարածք:
- Օգոտոսի 3-ին Նռնաձոր գյուղի հարակից սարալանջ տանող հատվածում հրդեհ էր բռնկվել՝ շարժվելով դեպի «Արևիք» ազգային պարկի տարածք: Այրվում էր խոտածածկ տարածք: «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» մասնաճյուղի և ԱԻՆ-ի աշխատակիցները մասնակցում էին հրդեհաշիջման աշխատանքներին: Օգոստոսի 3-ին մթության պատճառով աշխատանքները դադարեցվել են: Օգոստոսի 4-ին ժամը 08:00-ին վերսկսվել են հրդեհաշիջման աշխատանքները, ժամը 10:45-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և ԱԻՆ-ի աշխատակիցների համատեղ աշխատանքի արդյունքում հրդեհը մեկուսացվել է, այրվել է մոտ 10հա բուսածածկ տարածք: Նույն օրը ժամը 15:40-ին բռնկվել է հրդեհի նոր օջախ: Հրդեհը մեկուսացվել է օգոստոսի 5-ին ժամը 12:10-ին: «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի և ԱԻՆ-ի կողմից սահմանվել է հերթապահություն: Հրդեհը վերջնական մարվել է օգոստոսի 6-ին ժամը 19:30-ին, այրվել է ընդհանուր մոտ՝ 17հա տարածք, որից 4,5 հա «Արևիք» ազգային պարկի տարածք է: «Արևիք» ազգային պարկի տարածքում հիմնականում այրվել են մոտ

14 տարի առաջ հրդեհված, չորացած գիհու քամատապալ ծառեր և մոտ 0.3 հա մինչև 3 տարեկան կաղնու բնական վերաճի սաղարթ: Դեպքի մասին տեղյակ է պահվել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Սյունիքի տարածքային բաժին: Բուսական աշխարհին պատճառվել է 33.280.000 ՀՀ դրամի վնաս:

- Օգոստոսի 28-ին ժամը 17:40-ին «Շիկահող» մասնաճյուղի «Շիկահող» պետական արգելոց տեղամասի 11-րդ պահաբաժնի հարակից տարածքում հրդեհ էր բռնկվել: Հրդեհը անմիջապես մարվել է «Շիկահող» մասնաճյուղի 8 աշխատակիցների և զինծառայողների համատեղ աշխատանքի արդյունքում: Այրվել է մոտ 1500մ^2 խոտածածկ տարածք:
- Սեպտեմբերի 4-ին, առավոտյան հերթական շրջայց կատարելու ժամանակ, «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Զանգեզուր» մասնաճյուղի հարակից տարածքում նկատվել էր հրդեհ, որի հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել են «Զանգեզուր» մասնաճյուղի 6 աշխատակից:
- Սեպտեմբերի 15-ին ժամը 13:34-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Արևիք» ազգային պարկի 10-րդ պահաբաժնում հրդեհ էր բռնկվել: Սեպտեմբերի 15-ից սկսվել են հրդեհաշիջման աշխատանքները: Հրդեհվող տարածքը գտնվում էր գրունտային ճանապարհից մոտ 5.5 կմ հեռավորության վրա և դժվարանցանելի էր: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում էին «Արևիք» մասնաճյուղի տեսուչները՝ տնօրենի գլխավորությամբ: Երեկոյան մթության պատճառով աշխատանքները դադարեցվել են: Սեպտեմբերի 16-ին վերսկսվել են հրդեհաշիջման աշխատանքները, որին մասնակցում էին Մեղրիի ԱԻՆ աշխատակիցներ, կամավոր քաղաքացիներ, զինվորականներ: Հրդեհաշիջման աշխատանքները դադարեցվել են մթության պատճառով: Սեպտեմբերի 16-ին Սյունիքի մարզպետարանում տեղի է ունեցել հանդիպում՝ մարզպետի, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև, որտեղ քննարկվել է բռնկված հրդեհի կանխարգելման նպատակով ձեռնարկվող միջոցառումները: Սեպտեմբերի 17-ին առավոտյան վերսկսվել են հրդեհաշիջման աշխատանքները, որին միացել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» և «Զանգեզուր» մասնաճյուղերի, արագ արձագանքման խմբի՝ թվով 25 աշխատակից, Կապանի ԱԻՆ աշխատակիցներ, կամավոր քաղաքացիներ և Մեղրու «ՃՇՇՁ» թվով 10 աշխատակիցներ՝ իրենց տրանսպորտային միջոցներով: Սեպտեմբերի 20-ին հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվել է նաև ուղղաթիռ: հրդեհը մարվել է սեպտեմբերի 28-ին բռնկված: ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և Մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի գրանցված տվյալների համաձայն, բռնկված հրդեհի արդյունքում այրվել է մոտ 713 հա տարածք:

1.3 Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը:

• 2021 թվականի 3-րդ եռամսյանկի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների և հարակից համայնքների ղեկավարների հետ ՀՀ-ում և Սյունիքի մարզում տիրող դրության, ինչպես նաև համագործակցության, ազգաբնակչության հետ հակասությունները մեղմելուն ուղղված թեմաներով 17 անգամ անց են կացվել քննարկում-զրույցներ:

1.4 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (աշնանային – III-IV եռամսյակ) (ստուգում):

• 3-րդ եռամսյակում հերթական վերստուգիչ ստուգումներ չեն իրականացվել:

1.5. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:

• Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, փորձում ենք ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքների կենսաբազմազանությունը և բնականոն կայուն զարգացումը:

2. Գիտական միջոցառումներ

2.1 Գիտահետազոտական միջոցառումների իրականացում

ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում,

բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն, վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորսիական ընձառյուծ),

գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ:

• Երրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել են ստուգայցեր «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոց, «Խուստուփ» պետական արգելավայր, «Զանգեզուր» պետական արգելավայր, «Արևիք» ազգային պարկ և «Բողաքար» պետական արգելավայր տեղամասեր՝ խոշոր կաթնասունների (Եվրոպական այծյամ, Գայլ, Փորսուղ, Եվրոպական նապաստակ, Վայրի խոզ, Գորշ արջ, Բեզոարյան այծ, Կովկասյան ընձառյուծ, Հայկական մուֆլոն և այլն) շրջանում, լեռնային և անտառային հատվածներում եղանակային պայմանների (երաշտ, շոգ) ազդեցությունից կատարվող փոփոխություններն (առկա հիվանդություններ, տեղափոխություն, անկում և այլն) ուսումնասիրելու նպատակով: Ուսումնասիրությունների ընթացքում իրականացվել են տեղազննում, հետքերի զննում, ուսումնասիրում, լուսանկարում, հանդիպած առանձնյակների դիտանց և GPS սարքի միջոցով տեղորոշում: Իրականացվել է բարձրալեռնային հատվածներում հանդիպող Հայկական մուֆլոնի և Բեզոարյան այծի ուսումնասիրություններ, որոնց ընթացքում կատարվել է առանձնյակների դիտանց և քանակային ուսումնասիրություններ: «Շիկահող» պետական արգելոցի տարածքում

հանդիպել և ֆոտոբռնիչ սարքավորումների միջոցով նկարահանվել են Վայրի խոզ և Եվրոպական այծյամ, որոնց մոտ նկատվել է մպշկային խնդիրներ, որը մեր կարծիքով առաջացել է ամենամյա սեզոնային երաշտի հետևանքով՝ արտաքին պարազիտների ակտիվացումից:

- Խոշոր կաթնասունների շրջանում կատարվող տեսակային ուսումնասիրությունների նպատակով կատարվել է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում տեղադրված ֆոտոբռնիչ սարքավորումների մարտկոցների և հիշողության քարտերի ստուգում, փոխարինում՝ նշված հատվածներում տեղաշարժ կատարած կենդանատեսակների վերաբերյալ նյութերի և լուսանկարների ձեռքբերում:
- Իրականացվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տարածքում հանդիպող, բնադրվող, չվող թռչնատեսակների տեսակային ուսումնասիրություններ, որոնց ընթացքում աշնանային չու է գրանցվել հետևյալ տեսակների մոտ՝ Գյուղական ծիծեռնակ, Սև մանգաղաթև, Պիրոլ, Սևագլուխ դրախտապան, Սովորական սոխակ, Այգու դրախտապան, Փոքր ճանճորս, Կիսասպիտակավիզ ճանճորս, Մոխրագույն ճանճորս, Սպիտակաբեղ շահրիկ, Հարավային սոխակ, Կապտափող սոխակ, Սովորական կարմրատուտ, Կարմրակատար շամփրուկ, Ժուլան, Մարգագետնային չքչքան, Դաշտային ձիաթռչնակ, Անտառային Ձիաթռչնակ, Մարգագետնային ձիաթռչնակ, Սովորական կկու, Սովորական տատրակ, Գիշանգղ:

2.2 ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ իրականացում՝ մասնավորապես հազվագյուտ և անհետացող տեսակների վերաբերյալ:

- Հուլիսի 1-ին ելակետային ուսումնասիրությունների շրջանակներում «Երիտասարդ անտառաբույծների միավորում» ՀԿ-ի փորձագիտական խումբը այցելել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոց, «Զանգեզուր», «Խուստուփ», «Սոսու պուրակ» և «Սև լիճ» պետական արգելավայրերի տարածքներ, այնուհետև Շիկահողի այցելուների կենտրոնում իրականացվել է սեմինար, որի ընթացքում քննարկվել է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի կենսաբազմազանությունը, առկա խնդիրներն ու անհրաժեշտ լուծումները:
- Օգոստոսի 2-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի և ՊՏԱԾ-Հայաստան ծրագրի, «Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի կառավարման պլանների մշակման թիմի մասնագետների միջև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել հանդիպում:
- Սեպտեմբերի 15-ից 17-ը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցը մասնակցել է ՇՄՆ մասնաշենքում իրականացվող «Կենսաբազմազանության հզորացված պաշտպանություն և կայուն օգտագործում Հայաստանում՝ Եվրոպական չափանիշներին համապատասխան» ԵՄ թվինինգ ծրագրի շրջանակներում իրականացված սեմինար-հանդիպմանը:

- Բնության հատուկ պահպանվող տարածքների օրվա հետ կապված «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցներն այցել են.

Սեպտեմբերի 22-ին Կապանի թիվ 13 միջնակարգ դպրոց: Էկոկրթական դասընթացը միտված է եղել կարևորել Սյունիքի մարզի ԲՀՊ տարածքների դերն ու նշանակությունը: Աշակերների հետ քննարկվել են հետաքրքիր փաստեր Սյունիքի մարզում բնակվող Կովկասյան ընձառյուծի և նրա ապրելավայրերի մասին:

Սեպտեմբերի 23-ին կազմակերպել են «Բաց դռներ»-ի օր «Շիկահող» պետական արգելոցում՝ արգելոցին հարակից Շիկահող, Սրաշեն և Ծավ գյուղերի դպրոցականների հետ: Էկոկրթական սեմինարն անց է կացվել Կենու պուրակում, որի ընթացքում ներկայացվել է կենու ծառատեսակի ընդհանուր բնութագիրը: Դպրոցականները տեղում ծանոթանացան կենի ծառատեսակի հետ և տեղեկացան նրա հետաքրքիր հատկանիշների մասին: Այցի նպատակն էր աշակերտների մոտ ամրապնդել մարդ-բնություն շփումը:

Սեպտեմբերի 25-ին այցելեցին Գեղի գյուղի միջնակարգ դպրոց, որտեղ աշակերտներին ներկայացրին բոլոր այն կենդանատեսակներն ու թռչնատեսակները, որոնք հանդիպում են տվյալ արելաում: Ծանոթացրեցին բոլոր այն սարքավորումների հետ, որով իրականացվում են կենդանիների և թռչունների ուսումնասիրություններն ու մշտադիտարկումները:

3. Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ

3.1 ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիների ներկա վիճակի ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում վերականգնում և արդիականացում:

- Օգոստոսի 2-ին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի և ՊՏԱԾ-Հայաստան, «Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի կառավարման պլանների մշակման թիմի մասնագետների միջև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում տեղի է ունեցել հանդիպում: Քննարկվել է նաև էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ:
- Սեպտեմբերի 8-ից 10-ը «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցը մասնակցել է Մեղրի քաղաքում ՊՏԱԾ-ի շրջանակներում «Գեոինֆո» ՍՊ ընկերության կողմից իրականացվող «Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի կառավարման պլանների մշակման աշխատաժողովին:

Զբոսաշրջության բաժինն իրականացրել է նաև հետևյալ աշխատանքներն ու հանդիպումները

- Օգոստոսի 12-ին ՇՄՆ «Զանգեզուր» կենտոլորտային համալիր» ՊՈԱԿ-ը մասնակցել է Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք ճանաչված՝ Կապան քաղաքում կազմակերպված «8848» Երիտասարդական փառատոնին: Փառատոնին ՊՈԱԿ-ը ներկայացել էր «Տնկի՛ր քո ծառը» խորագրով, որի շրջանակներում

մասնակիցներին բաժանվում էին «Սոսու պուրակ» արգելավայրի տնկարանից բերված Արևելյան սոսու, Արևելյան կաղնու և Արևելյան կենսաածառի տնկիներ: Աշնանը խնամված տնկիները կտնկվեն ծառատունկի շրջանակներում: Փառատոնին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տաղավարը ճանաչվել է լավագույնը:

- Օգոստոսի 15-ից 17-ը Սյունիքի մարզի Կապան համայնքում անցկացվող՝ ամենամյա դարձած «Ուսանողական ամառ 2021» փառատոնը իրականացվեց նաև «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Խուստուփ» վրանային ճամբարում՝ 98 հոգու համար, որի ընթացքում կազմակերպվեց դասընթացներ, սպորտային և ինտելեկտուալ խաղեր:
- Օգոստոսի 18-ին իրականացվեց Վորլդ Վիժն Կապանի տարածքային ծրագրի շրջանակներում կազմակերպված՝ 60 հոգանոց էկոկրթական և գիտաճանաչողական արշավ՝ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոցում: Արշավի ընթացքում ներկայացվեցին «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքները, «Շիկահող» պետական արգելոց մասնաճյուղի կենսաբազմազանությունն ու ՀՀ Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացող կենդանատեսակներն ու բուսատեսակները:
- Պարբերաբար թարմացվել է ՊՈԱԿ-ի ֆեյսբուքյան էջը: Տեղադրվել են նոր լուսանկարներ և տեսանյութեր ԲՀՊ տարածքներից:

3.2 «Էյար թրեյլս» ՍՊ-ի հետ համագործակցություն, առկա երթուղիների համատեղ համալրում մեդիա բովանդակությամբ. լրացված իրականությամբ նոր արահետների մշակում:

- 3-րդ եռամսյակում հանդիպումներ չեն իրականացվել:

4. «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման միջոցառումների իրականացում

4.1 Արևելյան սոսու և հունական ընկուզենու բնական վերաճը ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական միջոցառումների իրականացում.

- «Սոսու պուրակ» պետական արգելավայրի տարածքում, տնկարանում իրականացվել են շաբաթօրյակներ և մաքրման աշխատանքներ՝ տնկիների փխրեցում, մոլախոտերից մաքրում:
- Իրականացվել է Արևելյան սոսու, Հունական ընկուզենու և կաղնու տնկիների խնամք:

4.2 Արգելավայրի ներտարածքային ճանապարհների բարեկարգում.

- Արևելյան սոսու և Հունական ընկուզենու բնական վերաճն ապահովելու նպատակով իրականացվել են ցանկապատերի և ճանապարհների բարեկարգում:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրեն Ա. Մկրտչյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի 2021թ. III եռամսյակի պետական բյուջեի

«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման ծառայություններ» ծրագրի իրականացման

Հ/Հ	Իրականացված միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Կատարման ժամկետը	Ծախսված գումարը (դրամ)
1	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն, հակահրդեհային միջոցառումների իրականացում	1. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-տարածքներում և պահպանման գոտիներում պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում: Մարդու գործունեության հետևանքով արգելոցի, ազգային պարկի և արգելավայրերի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում (79038.8հա): 2. Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում: Հակահրդեհային ճանապարհների ընթացիկ նորոգում: 3. Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը 4. ՊՈԱԿ-ի	1. Պահպանության միջոցառումներ՝ աշխատակիցների կողմից ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում ստուգումների և հերթապահությունների միջոցով: 2. Բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն 3. Հրդեհների կանխարգելում: 4. Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում բնապահպանական նորմերի և կանոնների կատարումն ապահովելու, որսագողության, ապօրինի ծառահատումները և հրդեհի դեպքերը կանխարգելելու նպատակով ստուգայցերի, ամենօրյա հերթապահությունների և շուրջկալների	1. Ընդհանուր միջոցառումներ, պատշաճ հսկողություն, սիստեմատիկ ստուգայցեր, շրջկալներ 2. Հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացվել են հանդիպումներ: 3. Հրդեհների կանխարգելում/ 3-րդ եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել 6 հրդեհաշիջման դեպք: Հրդեհները մարվել են օպերատիվ աշխատանքի շնորհիվ: Առավել հրդեհավտանգ տարածքներում անհրաժեշտության դեպքում պետք է սահմանել շուրջօրյա հերթապահություն: 4.Աշխատակիցների կողմից	01.07.2021 30.09.2021	29 234 665

		տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (գարնանային – II եռամսյակ) (ստուգում): 5. Հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:	իրականացում՝ խախտումների տեսակետից առավել վտանգավոր գոտիներում: 5. Ստուգումներ, հաշվետվություններ, վերլուծություններ և քննարկումներ:	արձանագրվել է որսագողության 2 դեպք և կազմվել են արձանագրություններ: 4. 3-րդ եռամսյակում հերթական վերստուգիչ ստուգումներ չեն իրականացվել: 5. Ընդհանուր միջոցառումների, պատշաճ հսկողության, սիստեմատիկ ստուգայցերի, շրջկալների և հարակից համայնքների ազգաբնակչության հետ իրականացված հանդիպումների շնորհիվ, փորձում ենք ապահովել պահպանվող տարածքների կենսաբազմազանությունը և բնականոն կայուն զարգացումը:		
2	Գիտական միջոցառումներ	1. Գիտահետազոտական միջոցառումների իրականացում: ա) կենսաբազմազանության մոնիտորինգի միջոցառումների իրականացման համար նախադրյալների ապահովում, բ) ողնաշարավոր կենդանիների որոշ խմբերի հաշվառմանն ուղղված աշխատանքներ, ուսումնասիրություններ և ներկա վիճակի վերլուծության՝ (մուֆլոն,	1. Հավաստի տվյալների ձեռքբերում, դիտարկումների, դաշտային ուսումնասիրությունների իրականացում: 2. Պետական արգելոցի և ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող ԲՀՊՏ տարածքներում հազվագյուտ և արժեքավոր բուսական և կենդանական տեսակների տարածվածության և կենսաբանական	1. Շարունակվել են համապատասխան ուսումնասիրություններ՝ տեսակային կազմի մոտ տեղի ունեցած փոփոխությունների ուսումնասիրման նպատակով: 2. Կատարվել են տվյալների բազայի լրացման, գիտական	01.07.2021 30.09.2021	1 827 166

		վայրի խոզ, եվրոպական այծյամ, բեզոարյան այծ, գորշ արջ, շնագայլ, գայլ, առաջավորասիական ընձառյուծ), գ) ԲՀՊ տարածքներում հանդիպող, բնադրվող չվող և նստակյաց թռչնատեսակների ուսումնասիրություններ: 2. ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ-ի տարածքներում կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ իրականացում՝ մասնավորապես հազվագյուտ և անհետացող տեսակների վերաբերյալ:	առանձնահատկությունների ուսումնասիրություններ, տվյալների ձեռք բերում, հաշվառման աշխատանքներ և մոնիթորինգի իրականացում (ամփոփ հաշվետվության կազմում)	նյութերի ամփոփման ինչպես նաև գիտահետազոտական և գիտաճանաչողական նյութերի նախապատրաստման աշխատանքներ		
	3. Էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ	1. «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի ԲՀՊ տարածքներում առկա երթուղիների ներկա վիճակի ուսումնասիրություն՝ անհրաժեշտության դեպքում վերականգնում և արդիականացում: 2.«Էյար թրեյլս» ՍՊ-ի հետ համագործակցություն, առկա երթուղիների համատեղ համալրում մեդիա բովանդակությամբ. լրացված իրականությամբ նոր արահետների մշակում:	Համագործակցություն Տրանսկովկասյան ՀԿ-ի հետ՝ «Արևիք» ազգային պարկում նոր արահետների մշակման և ստեղծման գործընթացում:	1.Իրականացվել է «Արևիք» ազգային պարկի, «Բողաքար» պետական արգելավայրի կառավարման պլանների և մյուս 5 ԲՀՊՏ-ի ելակետային ուսումնասիրությունների մշակման աշխատանքների քննարկումներ, որտեղ առաջարկվել է էկոտուրիզմի զարգացմանն ուղղված միջոցառումներ: 2. 3-րդ եռամսյակում հանդիպումներ չեն իրականացվել:	01.07.2021 30.09.2021	2 923 466
	4. «Սոսու պուրակ» պետական արգելավայրի վերականգնման միջոցառումների իրականացում	1. Արևելյան սոսու և Հունական ընկուզենու բնական վերաճը ապահովելու նպատակով խնամքի և սանիտարական միջոցառումների	Անտառտնտեսական միջոցառումների իրականացում	1.Իրականացվել է Արևելյան սոսու, Հունական ընկուզենու և կաղնու տնկիների	01.07.2021 30.09.2021	2 558 035

		իրականացում. 2. Արգելավայրի ներտարածքային ճանապարհների բարեկարգում		խնամք: 2.Իրականացվել են ցանկապատերի և ճանապարհների բարեկարգում	
ԸՆԴԱՄԵՆԸ					**36 543 332**

3-րդ եռամսյակում իրականացված միջոցառումներն ավելի մանրամասն ներկայացված են կից հաշվետվության մեջ:

«Զանգեզուր» Կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ

Տնօրեն Ա. Մկրտչյան